Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

18.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունք բաժնի 7-րդ, 31-րդ, 8-րդ, 20-րդ, 23-րդ, 32-րդ, 15-րդ, 42-րդ, 6-րդ, քաղաքացիական դատավարություն բաժնի 2-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ հարցերը:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 7

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, ապա Կոմիսիայի պայմանագրից ծագած իրավահարաբերությունները կարգավորող նորմերը սույն խնդրի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն:

Հարց 31

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1167-րդ հոդվածի 1-ին մասերով և 1168-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիրմային անվանման օգտագործում է համարվում նաև տվյալ իրավաբանական անձը նշելու նպատակով ֆիրմային անվանման կիրառումը ցուցանակների, ձևաթղթերի, ազդագրերի, ապրանքների, դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև օրենքով չարգելված այլ կիրառումներ:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, մասնավորապես առ այն, որ խնդրի 1-ի և 2-րդ պատասխանները մասնակի համընկնում են, ապա Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ ըստ 1-ին տարբերակի արտաքին ցուցանակի վրա «Աստղիկ» անվանման օգտագործումը կարող է դիտարկվել որպես ֆիրմային անվանման օգտագործում (...), իսկ իր կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված 2-րդ տարբերակում նշված է, որ այն չի կարող դիտարկվել որպես ֆիրմային անվանման օգտագործում:

Հարց 8

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 896-րդ հոդվածի 1-ին մասով, որից հետևում է, որ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրի դեպքում ֆինանսական գործակալին դրամական պահանջի զիջումը վավեր է, եթե նույնիսկ դրա արգելքի կամ սահմանափակման մասին համաձայնություն գոյություն ունի հաճախորդի և նրա պարտապանի միջև:

Հարց 20

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականի որոշմամբ արձանագրել է, որ գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը դրսևորվում է այն դեպքում, երբ կնքված գործարքի առարկան չի համապատասխանում այն հատկանիշներին, որը կողմը նկատի է ունեցել ի սկզբանե նման գործարք կնքելիս: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունն անհրաժեշտ է տարբերել այն իրավիճակից, երբ պայմանագրի կողմը թույլ է տալիս պայմանագրի առարկայի որակի պայմանին ներկայացվող խախտում, օրինակ՝ առուվաճառքի պայմանագրով վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 472-րդ, 485-րդ, 486-րդ հոդվածներ), որպիսի իրավիճակն էլ առկա է սույն խնդրում:

Հարց 23

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, ապա դրանք հիմնավոր չեն, քանի որ խնդրի փաստերից չի հետևում, որ երաշխավորության պայմանագրով նախատեսված է Բ-ի համապարտ պատասխանատվությունը, ինչը խնդրի ճիշտ լուծման համար ունի էական նշանակություն:

Հարց 32

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/2190/02/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականի որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին:

Հարց 15

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/0313/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք միայն քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները կամ այդ ընթացքում անձանց տված բացատրությունները պահանջվող գումարի հանձնման վերաբերյալ այլ վերաբերելի գրավոր ապացույցի բացակայության պայմաններում կարող են դիտվել բավարար փոխառության իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար, արձանագրել է, որ միայն հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով կամ ցուցմունքներով չի կարող հիմնավորվել փոխառության իրավահարաբերության ծագման հանգամանքը, քանի որ նախ՝ նման ապացույցները ժամանակագրական առումով ձևավորվում են փոխառության առարկայի ենթադրաբար փոխանցումից ավելի ուշ, հետևաբար գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու հիմքով ենթադրյալ փոխառության գործարքն առոչինչ է: Բացի այդ, դրանք կամային ակտ որակվել չեն կարող, քանի որ ուղղված չեն կողմերի համար փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, այլ քրեադատավարական վարույթի շրջանակներում դրանով կանխորոշված նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ են:

Վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություն կարող է կազմել այն դեպքը, երբ ենթադրյալ փոխառության երկու կողմերն էլ հետաքննության կամ նախաքննության ընթացքում իրենց տված բացատրություններով կամ ցուցմունքներով ընդունել են միմյանց միջև փոխառության իրավահարաբերության գոյության փաստը և հետագայում այդ իրավահարաբերությունից բխող վեճով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում տվյալ փաստը չի վիճարկվել ենթադրյալ փոխառուի կողմից կամ չի հերքվել այդ գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով:

Հարց 32

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/2190/02/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականի որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին:

Հարց 15

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/0313/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք միայն քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումները կամ այդ ընթացքում անձանց տված բացատրությունները պահանջվող գումարի հանձնման վերաբերյալ այլ վերաբերելի գրավոր ապացույցի բացակայության պայմաններում կարող են դիտվել բավարար փոխառության իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար, արձանագրել է, որ միայն հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով կամ ցուցմունքներով չի կարող հիմնավորվել փոխառության իրավահարաբերության ծագման հանգամանքը, քանի որ նախ՝ նման ապացույցները ժամանակագրական առումով ձևավորվում են փոխառության առարկայի ենթադրաբար փոխանցումից ավելի ուշ, հետևաբար գործարքի գրավոր ձևը պահպանված չլինելու հիմքով ենթադրյալ փոխառության գործարքն առոչինչ է: Բացի այդ, դրանք կամային ակտ որակվել չեն կարող, քանի որ ուղղված չեն կողմերի համար փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, այլ քրեադատավարական վարույթի շրջանակներում դրանով կանխորոշված նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ են:

Վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություն կարող է կազմել այն դեպքը, երբ ենթադրյալ փոխառության երկու կողմերն էլ հետաքննության կամ նախաքննության ընթացքում իրենց տված բացատրություններով կամ ցուցմունքներով ընդունել են միմյանց միջև փոխառության իրավահարաբերության գոյության փաստը և հետագայում այդ իրավահարաբերությունից բխող վեճով հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում տվյալ փաստը չի վիճարկվել ենթադրյալ փոխառուի կողմից կամ չի հերքվել այդ գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով:

քննությանը ներգրավելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, եթե նա չի միջնորդում գործի քննությունը վերսկսելու մասին:

Նշվածից հետևում է, որ վճճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում Դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու հանգամանքը պայմանավորված է գործի քննությանը ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կողմից գործի քննությունը վերսկսելու մասին միջնորդություն չներկայացնելու հետ:

Հարց 17

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից:

Հարց 19

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/31316/02/20 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով այն այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն դեպքում, երբ այն ներկայացված է թղթային տարբերակով և դրանում առկա է վճարող իրավաբանական անձի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով կատարված վճարումների վերաբերյալ վճարահաշվարկային փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում պահանջվում է բացառապես վճարող իրավաբանական անձի իրավասու անձի ստորագրությունը:

Հարց 22

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով 21.02.2020 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք դատարան դիմելու հարցում իրավական շահագրգռվածությունը կարող է համարվել նախադատելի նշանակություն ունեցող փաստ, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով դատարանը պետք է պարզի հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Ընդ որում, նշված հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է իրավունքների դատական պաշտպանություն հայցող կողմը՝ հայցվորը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ որոշ դեպքերում հայցվորի շահագրգռվածությունն ապացուցման ենթակա չէ: Նշվածը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ միևնույն դատավարության մասնակիցների միջև նույնաբնույթ նյութահրավական հարաբերությունից բխող նմանատիպ փաստական

քննությանը ներգրավելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, եթե նա չի միջնորդում գործի քննությունը վերսկսելու մասին:

Նշվածից հետևում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում Դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու հանգամանքը պայմանավորված է գործի քննությանը ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կողմից գործի քննությունը վերսկսելու մասին միջնորդություն չներկայացնելու հետ:

Հարց 17

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից:

Հարց 19

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/31316/02/20 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով այն այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն դեպքում, երբ այն ներկայացված է թղթային տարբերակով և դրանում առկա է վճարող իրավաբանական անձի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով կատարված վճարումների վերաբերյալ վճարահաշվարկային փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում պահանջվում է բացառապես վճարող իրավաբանական անձի իրավասու անձի ստորագրությունը:

Հարց 22

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով 21.02.2020 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք դատարան դիմելու հարցում իրավական շահագրգռվածությունը կարող է համարվել նախադատելի նշանակություն ունեցող փաստ, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով դատարանը պետք է պարզի հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Ընդ որում, նշված հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է իրավունքների դատական պաշտպանություն հայցող կողմը՝ հայցվորը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ որոշ դեպքերում հայցվորի շահագրգռվածությունն ապացուցման ենթակա չէ: Նշվածը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ միևնույն դատավարության մասնակիցների միջև նույնաբնույթ նյութահրավական հարաբերությունից բխող նմանատիպ փաստական

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 8719 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական դատավարություն բաժնի 4-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ